**29.02.24 - 29.02.24**
09:00
**Անցանց**
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պատմության ֆակուլտետ

**Ս.թ. ապրիլի 11-ին և 12-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետում** ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն գիտության և կրթության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» թեմայի շրջանակում կանցկացվի «Պատերազմը, սահմանը և մշակույթը» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են՝

1. ժամանակակից սոցիալ-մշակութային գործընթացները սահմանին,

2. սահմանային ժառանգության պահպանության խնդիրները,

3. կրթությունը և կրթական նոր փոփոխությունները սահմանին,

4. սահմանային բնակավայրերի մշակութային և կրոնական լանդշաֆտի փոփոխությունները,

5. սահմանային բնակավայրերի տնտեսական գործընթացների փոխակերպումները,

6. պատերազմի ազդեցությունը սահմանային բնակավայրերի առօրեականության վրա:

Գիտաժողովն անցկացվելու է հայերենով և անգլերենով:

Մասնակցության համար **մինչև ս.թ. մարտի 10-ը** անհրաժեշտ է գրանցվել և զեկուցումներն ուղարկել հետևյալ հղումով՝ https://forms.gle/V9mxaGza59LShjMd9:

Հարցերի դեպքում կապ հաստատել հետևյալ էլհասցեի միջոցով՝ culturallandscape203@gmail.com:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am